ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» Հունվարի 2023թ. N ՄՈ/26-Ա

ք. Արմավիր

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՍՄԲԱՏՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ դաշնային երկրամասի Բուրգենլանդ շրջանի Տնտեսական գրասենյակի ղեկավարի 2022 թվականի հունվարի 9-ի հրավերը, Բուրգենլանդ շրջանում կազմակերպվելիք աշխատանքային սեմինարին մասնակցելու նպատակով.

որոշում եմ՝

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Սմբատյանին, վարձատրության պահպանմամբ, 2023 թվականի հունվարի 23-ից 27-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Սաքսոնիա-Անհալթ դաշնային երկրամասի Բուրգենլանդ շրջան):
2. Կարինե Սմբատյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանին:
3. 2023 թվականի հունվարի 23-ից 27-ը ներառյալ «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Կարինե Սմբատյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:
5. Կարինե Սմբատյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի հունվարի 30-ից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 20.01.2023 17:54:21 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ